

ՏԱՆԹԷ ԵՒ ԻՐ ԳՈՐԾԸ*

Վաղաֆախան շրջանակը

Թոսքանա գաւառը, իր Ֆիրենցէ կամ Ֆլորենցիա (քաղաք ծաղկեցրու) ոստանով, Իտալիոյ սիրտը՝ կամ աւելի՝ միտքը եղած է, իր ընծայած նշանաւոր անձնաւորութիւններով՝ զբաղան ու թեան, զեղարուեստի եւ գիւտնագիտութեան մէջ, — Տանթէ, Ճիոթթոյ, Միքէլ Անճելոյ, Մաքքիաւելլի, Լէոնարտոյ տա Վինչի, — եւ ուրիշ անգլուական վիթխարի դէմքեր, մտքի եւ հանճարի, գրչի եւ վրձինի տիտաններ, որոնց համար կ'ըսէ Լորտ Պայրըն՝ թէ կարող էին միայն ասոնք ազդ մը վերակերտել ոչինչէն: Եւ սակայն այդ հրաշալի երկերը, Ապենինեանց եւ Միջերկրականին միջեւ տարածուած, եւ անոր մայրաքաղաքը Ֆիրենցէ, ուր կարծես փոխադրուած ըլլար երկրաւոր դերախտը՝ իր մշտադալար դարունով, իր զմրուխտէ երկինքով, իր ծաղկազարդ մարդերով եւ պուրակներով, Միջին դարու կէսէն սագին՝ երբ Քանոսսայի արիասիրտ եւ քաղաքագէտ կոմսուհին Մաթիլտէ մեռաւ, որ՝ իր իրր քառասնամեայ իշխանութեան շրջանին՝ ո'չ միայն պաշտպանած էր Ֆիրենցէն բռնաւորներուն դէմ, այլ փառքով, զօրութեամբ, յաջողութեամբ ճոխացուցած, յանկարծ կը խուժէ հոն վոհմակ մը փառասէրներու, ընչաքաղցներու՝ տիրանալու, աւար ու աւեր դարձնելու այն սխրալի քաղաքը, որ իր ընկերներուն մէջ՝ իրր գլխոյ մը՝ իրր յաւերժահարս մը կը նազէր ու կը սիւզար:

Այդ շրջանին արդէն (ԺԳ. դարու կիսուն) բոլոր Իտալիա հրդեհի եւ յեղափոխութեան մէջ էր, որուն կայծերը եւ ցնցումները կը ծաւալէին նաեւ միւս փոքրիկ պետութեանց եւ քաղաքներուն, անընդհատ կռիւներու եւ կռիւներու մէջ ի-

րարու դէմ: Ամէնուն աչքերը դարձած էին դէպի այն երկու մեծ պետութիւնները, որոնք անդուլ կ'ողորէին՝ կը մրցէին իրարու հետ, Իտալիոյ միահեծան պետ եւ իշխան դառնալու, մին՝ հողեւոր եւ միանդամայն քաղաքական իշխանութիւն, միւսը՝ զուտ աշխարհիկ — Պապութիւնը եւ Գերման կայսրութիւնը: Միւս բոլոր մեծ ու փոքր հասարակապետութիւնները, եւ նոյնիսկ քաղաքները, իրենց չահեքէն կամ ժամանակին պարագաներէն մղուած, փոփոխակի այդ երկու մեծ պետութեանց մէկուն կամ միւսին կողմը կը հակէին, եւ նոյնիսկ յաճախ միեւնոյն պետութեան կամ քաղաքի բնակիչները՝ պառակտած իրարու մէջ՝ զօրաղոյնին կողմը կը բռնէին: Այս դժբախտ երեւոյթը ընդհանրապէս՝ աւելի քան ուրիշ որեւէ քաղաքի՝ Ֆիրենցէի մէջ է որ կը պատահէր, բոլոր ժողովուրդը երկփեղկած՝ Կիպլիինեան եւ Կուելֆեան անուններուն տակ:

Ծնունդ եւ սնունդ Տանթի

Այս ազգագաւ ու եղբայրասպան կռիւներուն ատեն էր որ ծնաւ Տանթէ Ֆիրենցէի մէջ 1265ին. անոր մկրտութեան անունն էր՝ Durante, որ յետոյ համառօտուելով եղաւ Dante, իսկ մականունը՝ առնուած է մեծ մօրը Aldighiera անունէն, որ յետոյ անուշցնելով եղաւ Alighieri.

(*) Բաղմալատտակ գիտնական, հանգուցեալ է. Յովհաննէս Վրդ. Թորոսեանի (1860-1940) գիւտնէն հանելով կը հրատարակենք ներկայ յոգուածը, զոր հեղինակը պատրաստած է Փարիզ գտնուած ժամանակ, 1930-1937ի շրջանին, բանախօսութեան մը առիթով:



ՏԱՆԹԷ ԱԼԻԿԵՐԻ

Տանթէի հայրը կը կոչուէր Alighiero, արուեստով՝ իրաւագէտ մը: Տանթէ՝ ի բնէ սրամիտ, խելացի, զգայուն, մանուկ հասակէն զարգացաւ ուսման եւ դիտութիւններու մէջ, սորվելով դարուն բոլոր գիտելիքները, — քերականութիւն, հոգատութիւն, տրամաբանութիւն, թուարանութիւն, աստղաբաշխութիւն, եւն: Այս լուրջ ուսումներէն դուրս՝ մտքին հետ նաեւ մարմինը եւ ճաշակը կը թող մարզանքներու հոգ տարաւ, — ձիւնթացութիւն, նկարչութիւն, երաժշտութիւն: Միտքը՝ ճոխացած դիտութիւններով, հոգին բացուած արուեստներու վայելքին, մարմինը կազդուրուած մարզանքներով, անոր մէջ կեանքը՝ փթեցաւ, ուռճացաւ, յորդհոս զեղումով: Ինչ զարմանք ուստի, եթէ զեղեցկութիւնը՝ իր որեւէ ձեւին տակ՝ խորապէս կ'աղէր անոր սրտին վրայ, կա՛մ քերթուածի մը խորհրդաւոր հրապոյրով բացատրուած, կամ զեղարուեստին որեւէ ներգանակ զիծերով կամ դոյներով արտայայտուած, կամ կնոջ մը համեստ՝ բայց սիրուն դիմազիծերով, կամ իր սիրելի թոքանային պայծառ երկինքին եւ բնութեան հըրաշալի գոյներուն եւ բոյրերուն մէջ: Այդ զեղեցկութիւնը՝ մանուկ հասակէն՝ այնքան ուժգնօրէն կը գրաւէր անոր զգայուն սիրտը եւ վառ երեւակայութիւնը, որ ժամերով կը մնար ան խորասուզուած՝ հիացման ու զմայլանքի մէջ՝ որեւէ զեղեցիկ առարկայի կամ տեսարանի առջեւ: Եւ ան, տակաւին մանուկ՝ հազիւ իննամեայ, երբ հօրը հետ հիւր դացած էր՝ Ֆիրենցէի ճոխ եւ ազնուական Փոլեոյ Փորթինարիին տունը, տեսաւ անոր ծաղկատի՝ նոյնպէս իննամեայ՝ Պէաթրիչէ աղջկը, որ «ազնուական ձեւով ու գոյնով հագուած էր», կ'ըսէ նոյն ինքն Տանթէ, «խոնարհ եւ համեստ, կարմիր՝ վարդագոյն, դօտեւորեալ եւ զարդարուած, ինչպէս կը վայլէր իր մանուկ հասակին»: Ուրիշ անգամ մ'ալ, բաւական տարիներ ետք, պատահեցաւ անոր՝ Նոք կոչուած կամուրջին վրայ, — երկու տարիքոտ կիներու մէջտեղ, — նէ ողջունեց ազնու-

րէն Տանթէն, մինչ սա՝ չիկնած ու պատկառոտ՝ կեցած էր կամուրջին ծայրը:

Տանթէի սրտին մէջ ծլած այդ նախնական սէրը, դրեթէ վերացական՝ աննիւթ՝ դաղափարական բան մ'ունեցաւ մէջը, նկատելով Պէաթրիչէն՝ նոյն ինքն մաքրութիւնը, ամէնէն կատարեալ տիպարը զեղեցկութեան, բնութեան ժպիտը՝ ազնուական ծաղիկը, կնոջ ձեւի տակ յայտնուած: Եւ այսպէս, Տանթէի սէրը սոս Պէաթրիչէ՝ ուրիշ բան չեղաւ, բայց լուսաւոր բոց մը հրեղէն՝ կեանքի լպըրծուն ուղիին վրայ, որ առաջնորդեց անոր քայլերուն դէպի վեր, վառեց սիրտը յաւերժական բարիին եւ սիրոյն տենչով, լուսաւորեց միտքը՝ ճշմարտին զեղով, եւ թոյլ չտուաւ՝ որ դայթէր ան՝ երկտասարդ հասակին եւ զիւրազրած սրտին դառածութեամբ, — ընդհակառակն՝ եղաւ խորհրդանիշ մը, Մուսս մը՝ որ մըղեց զինքը արտադրելու այն հրաշակերտը, որ կ'ըսուի Divina Commedia: Եւ ինչպէս որ՝ որեւէ երկրաւոր զեղեցկութիւն՝ այնչափ աւելի հրապուրիչ կը դառնայ՝ որչափ աւելի խոստովուի է, որ՝ հազիւ ձեռք բերուած՝ կը սահի, կ'անհետանայ, — այսպէս ալ Տանթէի համար Պէաթրիչէ, որ հազիւ բացուած, կեանքի դառնութեան ու քաղցրութեան տակաւին անճաշակ, այն ինչ նոր հարս դացած Ֆիրենցէի ամէնէն ազնուական եւ պատուաւոր ընտանիքներէն մէկուն, անողոք խթութիւն մը խլեց զինքը իր սիրելիներէն, եւ անոր հրեշտակային հոգին թռաւ՝ իրեն աւելի արժանաւոր կայան մը գտնելու վերը: Քերթողը կ'ունենայ այս նախազգացումը, ուսկից աղբուած դառնապէս՝ կը հիւանդանայ, կը կարծէ լսել անուրջին մէջ ձայներ՝ որ կ'ըսեն. «Ան մեռաւ. դու ալ պիտի մեռնիս», — եւ կը թուի տեսնել եղբորամայր կիներ հերարձակ՝ որ կու լան փողոցին մէջ սղաւոր... արեւը կը մթադնի, աստղերը կը սփռունին՝ իբր թէ աշխարհին, եւ թռչունները անչնչացած գետին կը թաւալին: Եւ բարեկամ մը մօտենալով կ'ըսէ. «Ձե՞ս գիտեր, մեռաւ Պէաթրիչէ»... Իսկ

քերթողը անմխիթար՝ խորապէս զղացուած՝ կը նայի երկինք, կը տեսնէ բաղմաթիւ հրեշտակներու խումբեր՝ որ կը սաւառնին վեր, եւ առջեւին սպիտակափայլ ամպիկ մը շողշողուն, Պէաթրիչէի հոգին...: Եւ իրօք, շատ չանցած՝ իրականացաւ այդ երազը, 1290ին, հազիւ 25-ամեայ, թռաւ Պէաթրիչէ:

«Արքայութիւն» ուր հրեշտակներ լուսադուրեց Եւրոպական խաղաղութիւն կը վայլեն:

Տալիք՝ քաղաքական գործիչ

1295ին կը սկսի Տանթէի քաղաքական կեանքը: — Անոր սաստիկ՝ աներեւակայելի ցաւը Պէաթրիչէի մահուան վրայ, կեանքի եւ աշխարհի փորձառութիւնը, բուն դայրոյթը՝ Ֆիրենցէի մէջ տիրող անկարգութեանց եւ քաղաքին անխիղճ վարչներուն գէժ, մղեցին զինքը դէպի հայրենիքին կառավարութեան հոգերը, եւ որոնք մտքին մէջ եղան այն սերմերը՝ որոնցմէ փթեցաւ իր զրական հոյակապ երկը: Քաղաքական կեանքին միջամուխ ըլլալը՝ ուրիշ նպատակ չունէր՝ բայց միայն օգտակար ըլլալ հայրենիքին, որուն վարչական զեկը՝ յաճախ խաղալիք եղած փառասէր եւ ընչաքող զեկավարներու ձեռքը, Ֆիրենցէի փայլը երթալով կը նսեմանար եւ զիրքը կը խախտէր: Իրեն արժանիքով, հայրենիքին մաքուր սիրով, անսողիւտ վարքով, զիւանազէտի խորունկ մտքով, վարչական բոլոր աստիճաններէն անցնելով, կը տեսնէր զինքը 1300ին՝ քաղաքին բարձրագոյն վարիչ իշխաններուն մէջ, որոնք Viori կը կոչուէին, ուր այնքան մեծ եւ անվիճելի էր իր հեղինակութիւնը՝ որ առանց իրեն որ եւ է որոշում տեղի չէր ունենար: Եւ սակայն այդ պաշտօնը՝ պատճառ եղաւ անոր ծայրագոյն թշուառութեան եւ քաղաքական կեանքի ձախողանքին: Այդ շրջանին, չափազանց սուր հանգամանք առած էր՝ ներքին կուսակցութեանց եւ գաղութեանց պայքարը՝ ընդ մէջ ձերմակներու եւ Սեւերու, որոնց մէջ հաշտութիւն գոյացնելու նպատակով՝ Հոռ-

մէն կարդինալ մը զրկուած էր, որ ձեռնունայն ետ դարձաւ: Ասոր վրայ Սեւերը, (որոնք Պապին կողմնակիցներն էին), ծածուկ պատգամաւորներ զրկեցին Վոնիփակիոս Ը. Հռոմայ Քահանայապետին, որ Ֆիրենցէ զրկէ Կարդիոս տը Վալուա իշխանը (Գաղղիոյ նոյն ժամանակի Փիլիպպոս Գեղեցիկ կոչուած Թագաւորին եղբայրը), իբր հաշտարար եւ խաղաղարար: ձերմակներն ալ (զերման կայսեր կողմնակիցները)՝ փութացին իրենց կարգին պատգամաւորներ զրկել Հռոմ, որոնց զլխաւորն էր Տանթէ, որպէս զի խափանէն Կարդիոս տը Վալուա իշխանին դալուստը՝ իբր աղիտարեր եւ վնասակար իրենց դատին: Վոնիփակիոս Ը. ունայն խոստումներով եւ ամօքիչ խօսքերով բռնեց Տանթէն եւ իր ընկերները Հռոմի մէջ, մինչ անդին՝ Կարդիոս տը Վալուա՝ լիազօր իշխանութեամբ եւ մեծ բանակով հասաւ Ֆիրենցէի մօտ, որուն դռները փակ էին առջեւը, քաղաքին իշխանութիւնը ձերմակներուն ձեռքն ըլլալով: Հազիւ յաջողեցաւ ներս մտնել՝ Սեւերուն դարաններով եւ մատնութեամբ, վար առաւ հաշտարարի դիմակը, տապալեց ձերմակներուն կառավարութիւնը, Սեւերը իշխանութեան զլուխ անցուց. ծայր տունին եղբայրասպան կռիւները, գործընկցան ամէնէն աւելի վայրագ եւ նողկալի ոճիւրները, որոնք մեջ օր տեսնեցին. աւարի եւ կրակի տունին ձերմակներուն պալատները, խողխողեցին դանոնք՝ որ կ'ընդդիմանային, պղծեցին՝ բռնաբարեցին անոնց կիները եւ օրիորդները. գրիչը կը խորշի պատմել անոնց վայրագութիւնները, եւ այս բոլորը ինչո՞ւ... կրօնքը եւ հայրենիքը փրկելու եւ փառաւորելու համար՝ անոնց մտքով: ձերմակները աքսորուեցան, բանտուեցան, ըսպանուեցան, անոնց ինչքերը գրաւուեցան, որոնց հետ նաեւ Տանթէ՝ ամբաստանուած յանձնարար իր հակառակորդներէն՝ իբր կաշառակործ, զեղծարար եւ հակառակորդ Պապական կողմնակցութեան, դատապարտուեցաւ խոշոր դրամական տուգանքի եւ ժամանակաւոր աք-

սորի Թոսթանային: Բացակայ ըլլալով եւ անաստեղծով անոնց պայմաններուն, մըշտընջենաւոր աքսորի դատապարտուեցաւ, եւ խարոյկի վրայ ալրուելու՝ եթէ անոնց ձեռքը իննար: Եւ այսպէս ստիպուեցաւ թողուլ հայրենիքը, ա՛յլ եւս զայն չտեսնելու համար: Կարելի՞ է երեւակայել Տանթէին զգացած զայրոյթը, զղուանքը, վրէժը, ցաւը՝ այս բոլորը տեսնելով. ան իր արդար վրէժը լուծելու համար՝ ուրիշ միջոց չգտաւ, բայց միայն լեցնել զփոխքին խորերը՝ այդ անզգամ հողիններով, այնպէս որ՝ ամէն պարունակի մէջ՝ կը գտնենք Ֆիրենցէի ծանօթ դէմքեր, կա՛մ բոցերով շրջապատուած, կամ օձերու դալարումներուն յանձնուած եւ խաճատուած, կամ յաւերժական սառնարաններու մէջ փայտացած՝ քարացած, կամ Կերբերոսի ու Գերիոնի կատաղի մոլուցքներուն մատնուած, կամ կիզի բոցերու եւ հեղձուցիչ ծուխի փոսերու մէջ զլխի վայր ցցուած, — չխնայելով ո՛չ եկեղեցական բարձրաստիճան անձերու, եւ ոչ ալ կայսրներու կամ իշխաններու:

Տանթէի աքսորական կեանքին առաջին հանգրուանն եղաւ՝ Վերոնա, Սքալիճերի իշխաններուն պալատը. ուսկից անցաւ Քաղենթինոյ, Ուրպինոյ, Պոլոնիա, Փատուա, եւն, զանազան իշխաններէ եւ քաղաքներէ հրաւէրներ ընդունելով, ուր հասած էր արդէն իր մեծ համբաւը: Յուսահատ ա՛յլ եւս տեսնելու Թոսթանա՝ իր սիրելի հայրենիքը, տարիներով աստանդական կեանք մ'ունեցաւ: Անցաւ նաեւ Իտալիոյ սահմանները, զնաց մինչեւ Փարիզ, Սորպոնի մէջ աստուածաբանութեան եւ իմաստասիրութեան բարձրագոյն ուսման հետեւելու. իր Արքայութեան մէջ կը յիշէ՝ Յարպի փողոց (vico degli Strami)՝ որ է՝ Rue du Fouarre, Սէն Միշէլի մօտ, ուր կար այն ժամանակ «փիլիսոփայութեան նշանաւոր վարժարան մը՝ ուր Տրամարանութեան դասեր կ'աւանդէր՝ Պրապանթէն հմուտ վարդապետը Սիկիերի:

Փարիզ գտնուած շրջանին է՝ որ լը-

սեց թէ՛ Լիւքսեմպուրկի Հենրիկոս է. իշխանը, Աղուիսկրանայի մէջ կայսր օծուելով, կը պատրաստուի Իտալիա երթալ, հոն արդարութեան եւ խաղաղութեան իշխանութիւնը հաստատելու: Լողանի մէջ կ'ընդունի ան Իտալիոյ զանազան քաղաքներու գեսպանները եւ Կիպելլինեանց ներկայացուցիչները. կ'անցնի բանակով Մոնչենիդիոյէն, եւ 1310ի Հոկտեմբերին կը գտնուի Փրեմոնթի մէջ: Այս լսելով Տանթէ՝ հրճուանքով կը լեցուի, յուսալով գտնել վերջապէս իր անձին եւ հայրենիքին փրկութիւնը. կը փութայ հասնիլ անոր, ոտքը կ'իջնայ, կ'աղերսէ, կը յորդորէ, կը քաջալերէ՝ փրկել Իտալիան ներքին կռիւներէն եւ դժտութիւններէն: Թուղթ մ'ալ կ'ուղղէ իր ծանօթ իշխաններուն եւ աղափարներուն՝ պատուով եւ ուրախութեամբ ընդունիլ Հենրիկոս կայսրը իրը նոր Մովսէս մը՝ որ կը զրկուի Աստուծոյ փրկել իր ժողովուրդը՝ նոր Իսրայէլը:

Հենրիկոս կը մտնէ Միլան յաղթանակով, Ս. Ամբրոսիոս եկեղեցւոյն մէջ թաղաւոր կ'օծուի Արքեպիսկոպոսէն, Իտալիոյ ամէն կողմերէ հասնող գեսպաններու եւ պատուիրակներու ներկայութեան: Անմիջապէս կ'երթայ Քրեմոնա քաղաքը կը պաշարէ՝ կ'առնէ, յետոյ Պրեշիա, — անկէ կ'երթայ ձենովան կը գրաւէ, ծովով Փիզա կ'անցնի, եւ անկէ Հռոմ կ'ուղեւորի: Հոն կը գտնէ Կուեթֆներու հոծ բազմութիւն մը զինուած, որ բռներ է Ս. Պետրոս եկեղեցին տանող բոլոր փողոցները, մասնաւորապէս Կապիտոլիոնի մօտ եւ Ս. Հրեշտակ կոչուած կամուրջին վրայ: Հենրիկոս զգուշանալով ընդունալն արեւհեղութենէ, խնդրեց եւ ընդունեցաւ Ալիսեոն բնակող Պապէն, որ Լատերանեան Ս. Յովհաննէս եկեղեցւոյն մէջ կատարուի իր թագադրութեան հանդէսը. բայց չունեցաւ այն փայլը՝ ինչ որ պիտի ունենար Ս. Պետրոսի մէջ եւ Քահանայապետին ներկայութեան: Ուրիշ զանազան տխուր պարագաներ ձախողեցին կայսր արշաւանքը, որ իր դարձին Հռոմէն՝ ասպարէն հակառակութիւն կրեց ճամբուն

վրայ պատահած քաղաքներէն, մանաւանդ Թոսթանայի մէջ, ուր յատկապէս Ֆիրենցէ սաստկաբար կռուեցաւ՝ ի դէրեւ հանելով կայսերական բանակին բոլոր ճիգերը, որուն հետեւանքով՝ խորապէս խոցուած կայսեր սիրտը՝ հիւանդացաւ Փիզայի մէջ, և Սիենա քաղաքին մօտ վախճանեցաւ 1313ին:

Բոլոր Կիպելլինեանները յուսախար՝ լքան, ուժաբեկ եղան, մանաւանդ Տանթէ, որ սաստիկ դառնացած, միայն կրօնքին անպատմելի մխիթարութեան մէջ փնտռեց սրտին եւ հոգւոյն անդորրութիւնը: Այս լքուած եւ աստանդական օրերուն, վառք մը կը տեսնէ բլրակի մը ոտքը, կը մօտենայ, կը զարնէ դուռը. կրօնաւոր մը կը բանայ դուռը ու կը հարցնէ. «Ի՞նչ կ'ուղես» — «Սաղաղութիւն», կը պատասխանէ Տանթէ: — Կրօնաւորը ցոյց տալով երկինքը, «Հո՛ն է խաղաղութիւնը», կ'ըսէ՝ կը փակէ դուռը: Այն ատեն, իր արտօսարալից աչքերը կը դարձնէ անգամ մ'ալ առ Պէտրիէն, որ դոնէ հոն վերը՝ յաւերժական խաղաղութեան մէջ կարենայ հանգչիլ օր մը իր հողին: Ա՛յլ եւս թողուցած մահացու աշխարհը, դէպի վեր սեւեռած միտքը եւ սիրտը՝ հոն կը դնէ իր միակ յոյսը: Դժոխք եւ Քաւարան հեռու են իրմէ, որոնց երգերը աւարտած է արդէն... հիմակ, առանձնութեան մէջ, քերթողին միտքը կը չըջի՝ անշիջանելի լոյսերով եւ անմահ նուագներով զմայլած՝ Արքայութեան փառքերուն մէջ:

1317–18ին Ռաւեննայի՝ Կուլիտոյ տափուկ իշխանին մօտ կ'առանձնանայ, եւ հոն կը վերջացնէ Քերթուածին վերջին մասը՝ Արքայութիւնը: Վերջին անգամ մ'ալ, Կուլիտոյ իշխանին թախանձանքին վրայ, կ'երեւի քաղաքական բեմին վրայ գեսպան կ'երթայ Վենետիկոյ Հասարակապետութեան մօտ, ուր իր մեծ համբաւին շնորհիւ՝ գեղեցիկ յաջողութեամբ զլուխ կը հանէ իր կարեւոր առաքելութիւնը: Ի դարձին՝ ծանրապէս կը հիւանդանայ ճամբան, եւ հաղիւ Ռաւեննա

հասած՝ 1321 տարւոյն Սեպտ. 13ին գիշերը՝ կ'աւանդէ Արարչին ձեռքը իր խոնջ եւ տառապեալ հողին, խոնարհութեամբ՝ զղմամբ եւ ջերմեռանդութեամբ ընդունելով Եկեղեցւոյ Ս. Խորհուրդները:

Տանթէի նկարագիրը

Պոքթաչչիոյ՝ մեծ հիացող մը Տանթէի՝ ականատեսներէ լսած՝ հետեւեալ կերպով կը ներկայացնէ անոր կերպարանքը. «Միշտ հասակ էր, կ'ըսէ, հասուն տարիքին՝ քիչ մը կորացած, քալուածքը՝ ծանր եւ պատկառանք ազդող, վայելուչ զգեստներով: Երեսը՝ երկայն, արծուեռունգն, աչքերը՝ խոշոր, ծնօտները՝ լայն, վերին շուրթը՝ քիչ մ'աւելի դուրս ցցուած, գոյնը՝ թուխ, մազերը՝ խիտ, սեւ ու դանդուր, դէմքը՝ մեղմադճիկ եւ մըտածկոտ»: Ի բնէ սակաւախօս. երբ հարցուէր՝ կը պատասխանէր հակիրճ, կուռ, կտրուկ, սրամիտ եւ քանդակածոյ խօսքերով: Քիչ բառերու մէջ կ'ամփոփէր շատ ու մեծ իմաստներ. լուրջ, ուժեղ եւ յարձակող նկարագրի տէր, գրեթէ անժղկալի եւ անծիճաղ: Զարմանալի կարողութեամբ օժտուած, սուր եւ թափանցող հանճար մըն էր Տանթէ. մեծ գրագէտ, իմաստասէր, աստուածաբան, հմուտ՝ աստղաբանութեան, երկրաչափութեան, պատմութեան, զիցարանութեան, որոնց անթիւ աղացոյցներ ունինք իր քերթուածին մէջ: Քիչ մը դոռող ու հպարտ, ինչպէս կը վկայէ իրեն համար Քաւարանի երգերուն մէջ. բայց ո՛չ դիւրասէր, փառասէր եւ արծաթասէր, ինչպէս էին իր դարուն բոլոր քաղաքական գործիչները, զործերու եւ պաշտօնի գլուխ եղողները, — որով զինքը այնքան մեծարող եւ հիւրասիրող իշխաններու պալատներուն մէջ ապրեցաւ ու մեռաւ աղքատօրէն ու համեստօրէն: Արդար եւ ուղիղ էր իր բոլոր գործերուն մէջ, ճշմարիտ հայրենասէր, զոր չճանչցան ու չըզնահատեցին իր իսկ քաղաքացիները, որով զրկուեցան անոր պանծալի անունը եւ ոսկորները կրելէն:



Առաջինը՝ Իտալիոյ միութեամբ

Տանթէ՝ բացի իր մեծ Գերթուածէն՝ ձգած է նաեւ ուրիշ զանազան գրական դործեր, — որոնք արդէն պիտի կրնային անմահացնել իր անունը, — և ատոնց մէջ ամէնէն նշանաւորն է՝ Յաղազս Միապետութեան (De Monarchia) լատիներէն գրուած։ Այդ գիրքը կը խտացնէ մէջը՝ Տանթէի քաղաքական դաւանանքը։ Ան՝ հակառակ էր Իտալիոյ այնպէս բաժան բաժան ըլլալուն, մանր մունր հասարակապետութիւններով, կոմսութիւններով, մարքիզութիւններով։ Կ'ուզէր միացնել՝ ձուլել՝ բոլոր այդ փոքրիկ պետութիւնները, եւ այնպէս կազմել մի եւ մեծ Իտալիա մը, հզօր՝ որ կարող ըլլար դիմադրելու արտաքին բոլոր յարձակումներուն, — ինչ որ իբր 600 տարի վերջը՝ կարող եղան իրականացնել Քանթու, Կարիպալտի եւ Վիկտոր Էմմանուէլ։ Եւ ճիշտ ասոր համար է՝ որ ինքը՝ հակառակ ճշմարիտ քրիստոնեայ եւ ջերմ կաթողիկէ մ'ըլլալուն, հակառակ էր Պապերուն քաղաքական կամ ժամանակաւոր իշխանութեան, նկատելով զայն յաճախ իբր խոչընդակ մը իր այս դադափարին իրադործման։ Մանաւանդ որ անոնք կը հրաւիրէին մերթ օտարներ, ինչպէս Փրանսացի թագաւորներ եւ իշխաններ՝ երկրին ներքին միութիւնը եւ խաղաղութիւնը հաստատելու նպատակով։ Ինքը՝ շատ աւելի բարձր կը նկատէր Պապութիւնը՝ իր հոգեւոր իշխանութեան մէջ։ Եւ ճիշտ ասոր համար՝ ինքը ի սկզբան՝ Կուելֆ, վերջը դարձաւ եղաւ Կիպելլինո՝ գերման կայսրութեան կողմնակից, եւ վերջապէս ձերմակ Կուելֆներուն կուսակից։ — Հարկ համարեցայ այս քանի մը խօսքերը ըսել՝ պարզելու համար՝ թէ ինչո՞ւ յաճախ Պապերը՝ Դժոխքի պարունակներուն մէջ կը դնէ, եւ Ս. Պետրոսի կամ ուրիշ սուրբերուն բերանը կը դնէ՝ Արքայութեան մէջ՝ խիստ ու ծանր խօսքեր Պապերուն քաղաքական իշխանութեան հակառակ։

Տանթէի գլուխ-գործոցը

Տանթէի դերակշիռ եւ անդուգական դործն է իր «Աստուածային Կատակեր-գութիւն»ը կամ աստուածային քերթուածը, որուն նիւթը առած է իր երեւակայութենէն եւ փորձառութենէն, որով՝ ըստ մեծի մասին՝ նոր եւ ինքնաստեղծ դործ մ'է։ Սակայն, իր այլեւայլ մանրամասնութեանց մէջ, ներշնչուած է վարդապետական քերթողութեան նախկին փորձերէն, լատին քերթողներու՝ եւ զլատարապէս Վիրգիլիոսի արուեստէն։ Արիստոտէլի, Կիկերոնի եւ Բոյտիոսի իմաստասիրութենէն, Ս. Թովմաս Աքուինացիի աստուածաբանութենէն, ինչպէս որ՝ քերթուածին ձեւին նկատմամբ՝ օգտուած է «Ս. Պողոսի Տեսիլ»էն, Վերոնացի Եղբ. Յակոբիի «Յաղազս երկնային Երուսաղէմի եւ դժոխային Բարելոնի» քերթուածէն։ Սակայն, ըստ իս, ամէնէն աւելի օգտուած ըլլալու է «Ս. Աստուածածնայ Տեսիլ»ներէն, — ինչ որ չեն յիշեր բնաւ իտալացի գրագէտներ, — եւ ես ինքս բաղդատելով իրօք, տեսած եմ որ շատ կը նմանին՝ Տանթէի Դժոխքին մեղաւորներուն կրած տանջանքները անոնց հետ՝ որոնք կը նկարագրուին «Աստուածածնայ տեսիլ»ներուն մէջ։ (Այս «Տեսիլ» Ս. Աստուածածնայ՝ կը գտնուին մեր Ս. Ղազարոս տպարանէն լոյս տեսած «Թանգարան հին եւ նոր դպրութեանց» շարքին Բ. հատորին մէջ)։

Տանթէի քերթուածին ձեռագիր օրինակները 600էն աւելի են, եւ 400էն աւելի հրատարակութիւն եղած են։ Քառասունէ աւելի լեզուներու թարգմանուած է, միայն հայերէն՝ 3 թարգմանութիւն ունին։ — Ս. Գիրքէն վերջը՝ չկայ գիրք մը՝ որ այնքան մեկնիչներ ունեցած ըլլայ, ինչպէս Տանթէի այս դործը, — եւ տակաւին շատ մթութիւններ եւ առեղծուածներ կան մէջը՝ կարօտ մեկնութեան եւ լուսարանութեան։

Ի՞նչ է ուրեմն «Աստուածային Կատակերգութիւն» կոչուած քերթուածը։ — Այլաբանական, վարդապետական եւ բա-

րոյական քերթուած մը, որուն նպատակն է — ինչպէս ինքը Տանթէ կը բացատրէ իր մէկ նամակին մէջ՝ ուղղուած առ իշխան Cangrande della Scala — «զղացնել մեղաւորներուն իրենց թշուառութեան ներկայ վիճակը, ուղղելու զիրենք դէպի երանութեան վիճակը, որ ուրիշ կերպով չ'ըլլար՝ բայց միայն ճանչնալով զԱստուած եւ սիրելով, եւ անոր պատուիրանները պահելով», թէեւ բուն գրքին նիւթն է՝ «Հոգիներուն վիճակը՝ մահուանէն վերջը»։ — Ասոր համար Տանթէ, որպէս զի հասկնալի եւ մատչելի ըլլայ ժողովրդեան իր դործը, աշխարհիկ լեզուով գրած է. եւ զայն հարպուրիչ եւ միանգամայն օգտակար ընելու համար, հիանալի պատկերներու շարքի մը մէջ՝ ներկայացուցեր է մարդկային դործերուն ազետալի հետեւանքները, մէկ կողմէն՝ դեհենին յաւիտենական պատիժները, եւ միւս կողմէն՝ արքայութեան անսահման վայելքները եւ փառքերը, եւ անոնց միջեւ՝ քառութեան կամ հատուցման կերպերը, — հոյակապ եւ սիրալի համապատկեր մը, ուր ամբողջապէս երեւան կու դայ մարդուս կեանքը՝ իր անցեալով եւ ապագայով։

Անդեմական քափառումներ

Քրիստոսի 1300 թուականին, — երբ Վոնիփալիոս Ը. Քահանայապետը՝ առաջին անգամ Յոբելեան կամ Սուրբ տարի հռչակեց բոլոր աշխարհի, — Տանթէ՝ Սուրբ Շաբթուն Աւագ Հինգշաբթի դիւշերը՝ կը մոլորի մռայլ մացառուտ անտառի մը մէջ. յետ երկար թափառելու՝ կը հասնի դեղեցիկ բլրակի մը ոտքը. ո'րքան մեծ կ'ըլլայ անոր հրճուանքը՝ երբ

կը տեսնէ բլրակին դադաթը՝ լուսաւորուած նորածաղ արեւուն ճաճանչներէն։ Հակիրճ դադարէ մը վերջը՝ երբ կը սկսի մաղցիլ բլրակին կողմի վեր, յանկարծ երեք կատաղի դադաններ դիմացը ցըցուելով՝ կ'արդիւնէ ճամբան, — առիւծ մը, յովաղ մը, մատակ դայ մը, — որոնք կը խորհրդանշեն ըստ մեկնիչներուն՝ երեք չարապոյն մեղքերը, — հեշտասիրութիւն, հպարտութիւն, ազահութիւն կամ ցանկութիւն։ — Տանթէ՝ ահաբեկած եւ յուսահատ՝ ետ կը դառնայ, կը մտնէ անտառին մէջ. այդ պահուն՝ կը նշմարէ ստուեր մը որ իրեն կը մօտենայ. Վիրգիլիոսն է, որ սաստելով դադաններուն եւ հալածելով, կը սրտապնդէ եւ կը քաջալերէ Տանթէն, առաջարկելով տանիլ՝ հասնել զինքը բլրակին ծայրը։ Բայց երբ Տանթէ կը վարանի, այն ատեն Վիրգիլիոս կը յայտնէ՝ թէ եկած է իրեն օղնութեան, նոյն ինքն Պէթրիչէի յանձնարարութեամբ, որ ազատելով զինքը դադաններէն՝ ցոյց տայ ուղիղ ճամբան, եւ առաջնորդէ իրեն՝ դժոխքի եւ քաւարանի պատիժներուն մէջէն, որպէսզի ճանչնալով եւ խոստովանելով իր սխալանքները, սրբուի մեղքերէն, — եւ անկէ ետք՝ աւելի արժանաւոր եւ սուրբ հոգի մը պիտի տանի զինքը տեսնելու Արքայութեան անպատում փառքերը ու վայելքները։ Եւ այսպէս, քաջալերուած Տանթէ՝ կը հետեւի Վիրգիլիոսի իր խորհրդաւոր ուղեւորութեան մէջ։ — Սոյն խորհրդաւոր ուղեւորութիւնն է՝ որ «Աստուածային Կատակերգութեան» նիւթը կը կազմէ։

(Շաբ. 1)

Հ. ՅՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՐՈՍԵԱՆ